

нимов и партийных кличек), приведен также полный текст 29 архивных документов, большая часть которых публикуется впервые.

Наряду с этим работа «История армянской большевистской периодической печати» не лишена и отдельных недостатков. В работе не говорится в достаточной мере о той ожесточенной идеологической борьбе, которую вели армянские большевистские газеты против реакционной буржуазной, в частности против армянской националистической печати. Между тем каждый изучающий армянскую дореволюционную большевистскую периодическую печать не может не заметить ее систематическую и последовательную борьбу против всех изданий армянских буржуазных либералов, дашнаков, гичакистов и спецификов. Не во всех разделах подчеркивается основное направление деятельности большевистской печати в данный период. Например, во второй главе книги в достаточной мере не говорится о том, что в 1905—1907 гг. основными задачами большевистской печати являлись разоблачение врагов революции всех мастей, защита и обоснование тактических основ партии. В книге не соблюдена и необходимая пропорция; по нашему мнению, в необходимой мере не освещена деятельность газет «Кайц» и «Нор хоск» (1906), а также ряда вышедших в 1918—1920 гг. газет. Имеются недостатки и технического порядка.

При всем этом работа Х. Барсеяна «История армянской большевистской периодической печати», как мы уже отмечали, является ценной научной монографией. Она является успешной попыткой создания целостной дореволюционной армянской большевистской печати.

Л. ГЕВОРКЯН

ՌԻՍՈՒՄԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ՄՇՈ ԲԱՐՔԱՌԻ ՄՍՍԻՆ

Մշո բարբառը մեր լեզվի կենդանի խոչորագույն բարբառներից է. նա միաժամանակ չափազանց հարուստ է լեզվական արժեքավոր ու հետաքրքրական բոլորաբնույթի նրբեր չի կարելի պատահական համարել, որ Մշո բարբառը հայերենի առավել շատ ուշադրության արժանացած բարբառներից մեկն է: Հայտնի է, որ անդյուրում հայ պարբերական մամուլում, առանձին ժողովածուներում Մշո բարբառով և նրա հնթարարաններով ու խոսվածքներով նյութեր են տպագրվել: Նրանց մեջ հիշատակության արժանի են հատկապես Ք. Պատկանյանի¹ և Լ. Մսերյանցի² աշխատությունները: Բայց, այնուամենայնիվ, այս և մյուս աշխատությունները զիտական խիստ պահանջներին բավարարելուց հետո են: Մշո բարբառի մասին արժեքավոր գիտողություններ է արել խոչորագույն հայագետ ակադ. Հ. Աճառյանը «Հայ բարբառագիտություն» (Մոսկվա - Նոր-Նախիջևան, 1911). «Հայոց լեզվի պատմություն» (Երկրորդ մաս, Երևան, 1951) աշխատություններում և այլուր: Այս բոլորով հանդերձ Մշո բարբառը զիտական ամբողջական ուսումնասիրության կարիք ունի: Տարիներ շարունակ նյութեր հավաքելով ինչպես մեր սեպուրիկայի, այնպես էլ նրա սահմաններից դուրս գտնվող՝ մշեցիներով բնակեցված բնակավայրերում, Ս. Բաղդասարյան-Թափալցյանը կարողացել է արժեքավոր հետազոտություն

¹ Ստեփանյան, Материалы для изучения армянских наречий, Мушский диалект, СПб, 1875.

² Л. Мсерианц, Этюды по армянской диалектологии, Москва, 1897—1900.

գրել այդ բարրառի վերաբերյալ: Հեղինակը բարրառի գիտակ ներկայացուցիչներին գրի առած նյութերի հիման վրա է կատարել ուսումնասիրությունը. մի բան որ, ինչպես նշել է ակադ. Ն. Աճառյանը, բարրառ ուսումնասիրելու «ամենէն ցանկալի եղանակն է»: Այս հանգամանքը հնարավորություն է ընձեռել հեղինակին պարզելու բարրառիս հնչյունաբանությունը: Աշխատության մեջ միանգամայն բավարար չափով բացահայտված է, թե հայերենի հնչյունները Մշո բարրառում զբարարի համեմատությամբ ինչպիսի՞ փոփոխությունների են ենթարկվել: Այս մասում կան հնչյունափոխական բազմաթիվ երևույթներ, որոնք յուրօրինակ են և հետաքրքրական հայ բարրառների համեմատական ու մեր լեզվի ընդհանուր հնչյունաբանության համար:

Մենք սակայն, կարծում ենք, որ բարրառի հնչյունափոխության մասին խոսելիս պետք է վկայակոչել օտարազգի փոխառությունները: որոնք մեր բարրառներում մեծ մասամբ իրենց ձևերը անփոփոխ են պահում: Բայց զբախտով աշխատության 24, 28, 29, 38 և այլ էջերում թուրքերենից փոխառյալ տասնյակ բառեր մտցված են հնչյունափոխական այս կամ այն երևույթի տակ: Այստեղից էլ զտնուում ենք, որ Մշո բարրառում առ ձայնավորի քմայնացում չկա, որովհետև նա պետք է ունենար օ, ու հարակից հնչյուններ, մյուս կողմից՝ հեղինակի վկայությամբ «Մշո բարրառում... նկատվում է ա ձայնավորի քմայնացում՝ հիմնականում փոխառյալ բառերում» (էջ 17): Ավելի ճիշտ է Աճառյանը, որը զտնուում է, թե «Մշո բարրառում ա, օ, ու ձայնները կը պակսին և ասով հատկանշական դիժ մը կը կազմեն զանազանելու վանա բարրառեն, որ նույն ձայնավորը կը ձանչնա» (այս բարրառաչիտություն, էջ 116): Աշխատության մեջ զետեղված Մշո բարրառի և զբարարի բառացանկում մեզ չհաջողվեց թեկուզ մեկ բառ գտնել, որ ունենար ա հնչյունը:

Ճիշտ չէ կարծել, որ բարրառում հայերեն «վատթար» հնչյունափոխվել է «բեթար» ձևի: «Եթար» բառը թուրքերենից է փոխառյալ (և ոչ միայն Մշո բարրառում): Այդ փոխառյալ բառն ավելի շուտ օգտագործվում է որպես հյ. «վատթար» բառի համարժեք: Այս առավել ևս հաստատվում է հետևյալ փաստերով. վ>բ հնչյունափոխության ուրիշ ոչ մի դեպք չկա բարրառում: Իսկ ա հնչյունի անկման միայն երկու ոչ-հետևողական դեպքեր կան. աստված ասված, դիտենալ>գ՝ինալ բառերում, որոնք հեղինակի վկայությամբ «զործածական են և առ-ն պահպանված ձևով» (էջ 57):

Այս մասն առավել կհարստանար, եթե միաժամանակ խոսվեր բարրառում առկա ձայնավորների ներդաշնակության օրենքի մասին. այսպես՝ հնչյունափոխության բաժնում նկատվող այր (իկ)>իբիդ, աւելի>վելի, նեզանալ>նեզենալ, քերական>քերկան և այլն ձայնավորների ներդաշնակությամբ են առաջացել:

Մշո բարրառի առավել հետաքրքրական ու հարուստ բաժինը ձևաբանությունն է: Հեղինակին հաջողվել է բացահայտելու բարրառի հոլովման համակարգը: Ի տարբերություն հայերենի շատ այլ բարրառների, Մշո բարրառում ամենատարածվածն ու հոլովումն է, որին պատկանում են զբարարում, արդի զբականում ու բարրառներում այլ հոլովումների պատկանող բազմաթիվ բառեր: Հոգնակիում նույնպես զերիշխում է ու հոլովումը, որին պատկանում են եղակիում այլ հոլովումներով հոլովվող բոլոր բառերը՝ բացառյալ, անշուշտ, օ հոլովման պատկանող բառերը:

Հեղինակը հանգամանորեն պարզարանել է Մշո բարրառի խոնարհումը, որտեղ զբարարյան բոլոր չորս խոնարհումներն էլ՝ ել, ըլ, ալ, ուլ պահպանված են: Բայի խոնարհումը այդ բարրառի, զուցե, ամենահետաքրքրական երևույթն է. եթե զբարրում տարբեր սեռերի պատկանող բայերի ներդաշնակումն ու կրավորաձև խոնարհումները կարելի է իմանալ, ապա այստեղ բայական փոխանցումները չափազանց աղատ են: Մշո բարրառում նույն բայը կարող է խոնարհվել և՛ կրավորաձև, և՛ ներդաշնակումն ու լինել չեզոք սեռի բայ: Մյուս կողմից՝ ներդաշնակումն սեռի բայը կարող է խոնարհվել և՛ ներդաշնակումն, և՛ կրավորաձև և երկու դեպքում էլ պահպանել իր ներդաշնակումն իմաստը. ինչպես՝ ուղել, յես կուզիմ. յես կուզեմ, — քելել, յես կըբելիմ, յես կըբելեմ: Պետք է ասել, որ հեղինակին հաջողվել է ուսումնասիրել բայերի խոնարհման այս բոլոր զբառաբանությունները և առանձին ցանկերով նշել այն բոլոր բայերը, որոնք, առանց սեռի փոփոխության, միաժամանակ խոնարհվում են ի և ե խոնարհիչներով:

1 Ս. Ն. Բաղդասարյան-Փափալյան, Մշո բարրառը, Երևան, 1958:

Աշխատանքում ժանրամասներեն քննության են առնված Մշո բարբառի բոլոր գերբայները իրենց դանազան զրսեորումներով, ինչպես նաև բայի ժամանակների կադմոթյունը: Այս բաժինը կարելի է լիուլի հաջողված համարել:

Մեր կարծիքով հեղինակի մոտ տեղ են գտել մի քանի անճշտություններ և էջ 142-ում, խոսելով հայերենի չ սոսկածանցավոր բայերի՝ Մշո բարբառում կրած փոփոխությունների մասին, հեղինակը ի թիվս այլ բայերի նշում է նաև ամաչել բայը. որտեղ չ-ն (ավելի ճիշտ՝ աչր) սոսկածանց է համարում, մինչդեռ «Յ խոնարհման պատկանող աղաչել և ամաչել բայերի մեջ աչ ածանցը ձուլվել է բայարմատներին. և այդ բայերը խոնարհվում են նույն խոնարհման պարզ բայերի նման՝ աղաչեմ—աղաչեցի, ամաչեմ—ամաչեցի» (Ա. Արբահայան, Գրաբարի ձեռնարկ, էջ 131):

Ըստ եղած փաստերի հարցական է նաև ըզձական գերբայի առկայությունը բարբառում. ինչպես հայտնի է, ըզձական կամ ժխտման գերբայը ժխտական սլալամականի ապառնի և անցյալի ապառնի ժամանակներում է հանդես գալիս, մինչդեռ աշխատության մեջ տեսնում ենք, որ ա խոնարհման բայերը սլալամականի ապառնիները այդ ձևով են կազմում (չըմընամ, չըմընաս, չըմընա..., չըսընի, չըմընի, չըմընէր...): Ե խոնարհման բայերի սլալամականի անցյալի ապառնիում նույնպես ըզձական գերբայ չենք գտնում (չըսըմիմ, չըսըմի՛ր, չըսըմէր...), իսկ ապառնիում ժխտման գերբայով ձևերը երկրորդական են, այդ էլ ոչ հետեղականորեն են գործածվում (չըմ կարի, չըս կարի, չբ կարի, չըն կարի): Այս երևույթն առավելագույնը զեպքում կարելի է բնութագրել որպես զրական լեզվի ազդեցությունը վերջին տասնամյակներում առաջացած:

Բարբառում գործածվող՝ չթեթվող խոսքի մասերին պատկանող բառերն աշխատության մեջ տրված են առանց տարբերակելու հայերեն՝ն են, թե՞ այլ լեզուներից փոխառնելով: Մենք գտնում ենք, որ առավել նպատակահարմար կլինեիր ցույց տալ հայերենին և օտար, փոխառյալը:

Բարբառագրերն է ուսումնասիրված բարբառի բառային կազմը. հեղինակը կարողացել է սեղմ ու բովանդակալից կերպով նկարագրել այն: Պարզվում է, որ հին հայերենի հիմնականում վերացականությունը, հավաքականությունը, զգացմունք և այլն արտահայտող բառերն են պակասում բարբառում. այսպես՝ ամէն > յրմէն բառով կա ընդամենը մի քանի բառ, մինչդեռ, ինչպես նշում է հեղինակը, «Առձեռն» բառարանում այդ արմատից կազմված բարբառությունների թիվը 400-ից ավելի է: Մշո բարբառում փոքր թիվ են կազմում նաև ածանցավոր բառերը, մինչդեռ, ինչպես հայտնի է, ածանցները բառակազմական մեծ հնարավորություն են տալիս: Այս բոլորի հետ, սակայն, Մշո բարբառում կան բարբառային կազմությամբ նոր բառեր և հայերեն բառերի նոր իմաստավորումներ, որոնք հնարավոր են զարձնում արտահայտելու ամեն մի միտք: Թանկալի էր, որ հեղինակն իր աշխատության մեջ առանձին գետեղբեր մի այսպիսի բառարան՝ ձիշտ է. հեղինակը փորձ արել է հավելվածի նյութերում (նմուշներում) հանդիպող բառերի բարբառային բառարան կազմել, բայց այդտեղ թուրքերենից փոխառյալ բառերը շատ են. ինչպես՝ լեզվից «բեզերի իշխանություն», ընտրար «ծեր, դառամյալ», ընտրար «հավատ», խըզմաթթյար «ծառա», աղախին». հադյա «նվեր», դաթըր «ջորի», յեմ «կեր», սավղա «սեր» և այլն, և այլն: Դեռ ակադ. Ն. Աճառյանն իր «Հայերեն զավառական բառարան» (ԻԻՖիս, 1913) աշխատության մեջ զավառական բառեր ասելով հասկանում էր այն բառերը, որոնք օտար լեզվից մեր փոխ առնված չեն, հայերեն են, բայց միևնույն ժամանակ հին հայ մատենագրության մեջ ավանդված չեն» (ընդգծումը մերն է— Ս. Ա.): Մյուս կողմից՝ հեղինակը, խոսելով ընդհանուր հայերեն բառերի՝ բարբառում ունեցած «տարատեսակների» մասին, նշում է վիշտ—դարդ, նավ—դ՛ամի, կապիկ—մայմուն. ծնոտ—չանա, կաղ—չօլախ և այլ բառեր, որոնք թուրքերենից են փոխառյալ: Գավառական բառարանը պետք է գերծ լինի օտարազգի բառերից կամ, առավելագույնը զեպքում, ինչպես գտնում է Ս. Ամատունին, օտարազգի բառերից պետք է դնել նրանք, որոնք անհրաժեշտորեն գործ է ածում ժողովուրդը, չունենալով համազոր և համանիշ հայ բառ»:

Գավառական բառարանում մեր կարծիքով կարելի էր մտցնել նաև հին հայերենի բոլոր այն բառերը, որոնք բարբառում նոր իմաստավորում են ստացել, ինչպես դի-

1 Ս. Ա. Ամատունի, Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, 1912, էջ Ը:

տել է հեղինակը գրարարից—Մշո բարբառ բառացանկում: Այդ բառերից են, առնել>առնել «1. գնել, 2. ամուսնանալ», բոլորել>բ'օլլրել «հրահարակ լինել», բռնել>բ'ըռնել «1. թթու դնել, 2. վարձել» գլխաւոր>գրլխավոր «ամուսին», դարձաւոր>դ'արցըվոր «տղեգ այլանդակ», թնթոց>թրնթոց «խառնակիչ մարդ» և այլն, և այլն, մի բան, որ զանում ենք հայերեն բոլոր գալատական բառարաններում:

Աշխատութեան մեջ տրված են Մշո բարբառով գրված նմուշներ, որոնք 40 էջ են քննում: Զիտսելով դեռ նրանց գիտական արժեքի և կարևորութեան մասին, նշենք, որ առածներն ու ասացվածքները, ժողովրդական հավատալիքները մեր ժողովրդական մանահյուսութեան գողտրիկ սատառիկներ են և լեզվաբանական, ճանաչողական, գրականագիտական արժեք ունեն:

Ամփոփենք. նշված թերութիւնները աշխատութեան գիտական արժեքը չեն նսեմացնում: Ս. Իսախանյան-Քափալցյանի «Մշո բարբառ» մենագրութիւնը լիարժեք գիտական աշխատանք է:

Ս. ԱՆՔՈՍՅԱՆ